ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ Ը

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

27.10.2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանս, քննության առնելով «ԱԾՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի՝ ՇՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-22/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած համարելու և նոր գնման ընթացակարգ կազմակերպելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

«ԱԾՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն 07.07.2022թ.-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի՝ ՇՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-22/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած համարելու և նոր գնման ընթացակարգ կազմակերպելու պահանջի մասին: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր Արմինե Սաֆարյան/ 15.07.2022թ. որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են հայցվորին: Հայցվորի կողմից հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո եռօրյա ժամկետում՝ 24.10.2022 թվականին, այն կրկին ներկայացվել է դատարան:

Գտնում եմ, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 234.5.-րդ հոդվածների պահանջներին, ուստի պետք է ընդունվի վարույթ և համարվի դատարան ներկայացված այն սկզբնական ներկայացնելու օրը:

Միևնույն ժամանակ դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով և դատական ակտը հրապարակել հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5.-րդ, 234.6.-րդ և 234.9. հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱԾՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի՝ ՇՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-22/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած համարելու և նոր գնման ընթացակարգ կազմակերպելու պահանջի մասին ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 08.12.2022 թվականին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ այն դատական տեղեկատվական համակարգում տեղադրելու միջոցով:

Հայցադիմումը դատարան ներկայացված համարել այն սկզբնական ներկայացման օրը՝ 07.07.2022 թվականին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա է բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**